ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
(XIX դարի երկրորդ կես—XX դարի սկիզբ)

Ն. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

1855 թ. հիմնադրվեց Մոսկվայի համալսարանը, որը չափազանց մեծ դեր խաղաց Ռուսաստանի ժողովուրդների, ինչպես և արևելահայերի բուհական կրթության գործում։ Սակայն առայսօր ուսումնասիրված չէ նրա գործունեությունը հայազգի մասնագետների ու գիտնականների պատրաստման, ինչպես և հայագիտության զարգացման առումով։

Այս հոդվածի նպատակն է համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա համառոտակի բնութագրել Մոսկվայի համալսարանի դերը բարձրագույն կրթությամբ հայ մասնագետների և գիտաշխատողների պատրաստման գործում։

Հայերը, ըստ պրոֆեսոր Ա. Մ. Արշարունու, Մոսկվայի համալսարանում սկսել են սովորել նրա հիմնադրման առաջին տարիներից[1]։ Մինչև Վրաստանի միանալը Ռուսաստանին (1801 թ.) նրանք հատուկենտ էին։ Հետագայում, Մոսկվայի Լաղարյան ճեմարանի հիմնադրումից հետո, հատկապես 1860-ական թթ. սկզբներին՝ կապված ռուսական հասարակական-մանկավարժական շարժման հետ՝ հայ երիտասարդների թիվը համալսարանում աճեց։ 1861/62 ուսումնական տարում սովորում էին 46 հայ ուսանողներ[2]։ Շուտով, ինչպես բոլոր, նույնպես և հայ ուսանողների թիվը, լուսավորության հետադեմ մինիստր Դ. Ա. Տոլստոյի սահմանափակումների հետևանքով կրճատվեց. 1874 թ. համալսարանում սովորում էր ընդամենը 1166 ուսանող[3], իսկ հայերի թիվը երկու տասնյակի սահմաններից չէր անցնում։ Հիշյալ թվականից սկսած համալսարանի ուսանողության հետ միասին սկսեց աճել նաև հայ ուսանողների քանակը. 1876 թ. սովորում էր 23 հայ լուսավորչական դավանանքի ուսանող։ Անշուշտ, հայ ուսանողների թիվը քիչ ավելին կր, քանի որ հաշվառքից դուրս են մնացել ինչպես այլադավան, նույնպես և հայ ազատ ունկնդիրները[4]։

1870-ական թթ. վերջերին հայ լուսավորչական դավանանքի ուսանողները կազմում էին համալսարանի ամբողջ ուսանողության 1,7—2,1 տոկոսը, 1880-ականին՝ 2—2,8, 1890-ականին՝ 2,2—2,8, մինչև 1905 թ.՝ 3—3,5, իսկ մինչև 1917 թ.՝ 3—4,9 տոկոսը։ Այդ նշանակում է, որ 1870-ական թթ. վերջերին համալսարանում սովորում էր 23—39, 1880-ականին՝ 55—93, 1890-ականին՝ 80—119, մինչև 1905 թ.՝ 137—194. մինչև 1917 թ.՝ 228—491 հայ լուսավորչական դավանանքի ուսանող։ Հայ երիտասարդության հոսքը դեպի համալսարան ուժեղ թափ ստացավ XX դարի սկզբին, երբ Անդրկովկասի հայ բուրժուազիան բարձրագույն կրթությամբ մասնագետների խիստ պահանջ ուներ։

Համալսարանի ընդհանուր և հայ ուսանողության աճի համեմատությունը ցույց է տալիս, որ հայերինը միջինից փոքր-ինչ բարձր էր։ Այսպես, 1876—1900 թթ. համալսարանի ուսանողության միջին աճը կազմում էր 71,5, իսկ հայերինը՝ 89,7 տոկոս[5]։ 1900—1917 թթ. միջին

---

1 Ա. Արշարունի. Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան. Երևան, 1955, էջ 14։

2 Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան. հ. 8, Երևան, 1982, էջ 34։

3 Տե՛ս Отчет о состоянии и действиях имп. Московского университета в 1873—74 академическом и 1874 гражданском году. М., 1875. с. 45.

4 Մոսկվայի համալսարանում սովորում էին նաև քիչ թվով հայ, այսպես կոչված, «կոդմնակի ունկնդիրներ», դեղագործի օգնականներ, ինչպես և հայ կաթոլիկներ ու բողոքականներ, որոնց մասին համապատասխան տվյալներ չկան։

5 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1876 год. М., 1877, с. 21; Отчет за 1900 год. М., 1901. с. 258—259.

աշն էր 60,5, իսկ հայերինը՝ 55,5 տոկոս։ Այդ փաստերը վկայում են ոչ միայն արևելահայերի սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքի վերընթաց զարգացման, այլ նաև ռուսական բուհական կրթության նկատմամբ հայ երիտասարդության արտակարգ ակտիվության մասին։

Մոսկվայի համալսարանը ամենաշատ հայ ուսանողներ ունեցել է 1909/10 ուսումնական տարում, երբ սովորում էին լուսավորչական դավանանքի 491 հայ երիտասարդներ։ Սակայն հիշյալ թվականի ուսանողական անձնակազմի ցուցակների ուսումնասիրությունը բացահայտեց, որ համալսարանում սովորում էին 41 հայ այլադավաններ, և կողմնակի ունկնդիրներ, որոնք համալսարանի հաշվետվություններում չէին նշված հայերի հետ։ Ուրեմն 1909/10 ուսումնական տարում համալսարանում սովորում էին 532 հայ երիտասարդներ կամ ամբողջ ուսանողության 5,2 տոկոսը[7]։ Ժամանակի համար այդ լուրջ ցուցանիշ էր, եթե նկատի առնենք հիշյալ թվականին Ռուսական կայսրության սահմաններում ապրող հայ լուսավորչականների և այլադավանների ընդհանուր թիվը[8]։ Միաժամանակ հիշյալ փաստը վկայում է, որ համալսարանում հայ ուսանողության թիվը միշտ էլ եղել է ավելին, քան ցույց է տրված հաշվետվություններում։

Դժվար է գերագնահատել Մոսկվայի համալսարանի դերը բարձրագույն կրթությամբ հայ մասնագետների պատրաստման, հետևաբար և արևելահայ մտավորականության ձևավորման գործում։

Միարժեք մասնագետի համարավ են ձևոք բերել հատկապես համալսարանի շրջանավարտները։ Հաշվետվություններում չկան հատուկ տվյալներ հայ շրջանավարտների մասին, այլ տրված են սնվտնական ցուցակներ, ինչպես և որոշ տեղեկություններ՝ կապված նրանց ավարտած միջնակարգ դպրոցի ու սոցիալական ծագման հետ։ Այդ ցուցակներից մենք գուրս ենք գրել հայ շրջանավարտների ազգանունները։ Հնարավոր է, որ մենք մի քանիսը շփոթած լինենք, քանի որ գործող ազգային խտրականություններ ստիպում էր հայ ուսանողին գրվել ռուսականացված անուն, ազգանուն, հայրանունով։ Միաժամանակ նկատի ենք ունեցել հաշվետվությունների այն տվյալները, որտեղ, ըստ դավանանքի, տրված է ավարտական կուրսի վերջին կիսամյակի ուսանողների քանակը։ Այդպիսիները համարյա բոլորը ավարտում էին։ Եթե ընդունենք, որ մենք ոչնչամամբ մի բանի այլադիների դիտել ենք որպես հայեր, ապա բացառված չէ նաև, որ մեզ չի հաջողվել բացահայտել որոշ հայ երիտասարդների ազգությունը։

Մոսկվայի համալսարանը, բացառությամբ 1877 և 1905 թթ.[10], միշտ էլ տվել է հայ շրջանավարտներ, որոնց տոկոսային հարաբերությունը առկա սովորող լուսավորչական դավանանքի ուսանողության հետ ասահմանարար նվազել է։ Այսպես, 1876 թ. հայ շրջանավարտները

---

6 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1916 год. М., 1917, ведомость № 6.

7 Տե՛ս Алфавитный список студентов и посторонних слушателей имп. Московского университета за 1909—1910 академический год. М., 1909.

8 Ռուսական կայսրության մեջ ապրում էր 159 մլն. 200 հազար մարդ։ Արևելահայերի քանակը կազմում էր՝ Կովկասում 1665749 լուսավորչականներ և 66925 այլադավաններ, իսկ Կովկասի սահմաններից դուրս մոտ 75023 հայեր։ Տե՛ս Кавказский календарь на 1916 год. Тифлис, 1915.

9 Այդպիսիներից էին. Սերերբյանով Մինաս Միխայլովիչ, Միխայլով (Խազիդով) Հակոբ, Վլասով Գերասիմ (Կարապետ) Վլասովիչ, Գարինով Գրիգորի Մնացականովիչ, Նիկոլոպով Սերգեյ (Սարգիս) Իվանովիչ, Տոփալով Իվան (Հովհաննես) Մարտինովիչ, Ջերոտարյով Աստվածատուր, Կուշնարյով Սարգիս, Շապոշնիկով Արմենակ, Կուլիչանով Դավիթ Մամիկոնովիչ, Անանև Միխայել Հարությունովիչ, Շեյկովնիկով Սարգիս, Պոպով Սարգիս և այլն։

10 Հաշվետվության կցկտուր տեղեկություններից երևում է, որ 1877 թ. համալսարանի մի խումբ հայ ուսանողներ կամավոր մեկնել էին Կարսի ռազմաճակատ։ Տե՛ս Речь и отчет, читанные на торжественном собрании имп. Московского университета 12-го января 1878 года. М., 1878, с. 109—111. 1905 թ. բուրժուազեմոկրատական հեղափոխությանը ակտիվ մասնակցելու համար համալսարանի, հատկապես ավարտական կուրսի, ուսանողությունը մասսայարար հեռացվել էր, որը հաշվետվություններում չէր կարող արտացոլվել։ Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1905 год. М., 1906, ведомость № 4.

(7 հոգի) կազմում էին լուսավորչական դավանանքի ուսանողության (23 հոգի՝ 30.4 տոկոսը[11], 1899 թ.՝ 46,6[12], 1903 թ.՝ 21,5[13], 1910 թ.՝ 14.1[14], 1915 թ.՝ 13.1 տոկոսը[15]։ Տոկոսային հարաբերության աստիճանական անկման պատճառն այն էր, որ XIX դարում ուսանողությունը համալսարանում համեմատաբար հանգիստ վիճակի մեջ էր. սովորում էին քիչ թվով ընտրյալ հայ ուսանողներ, որոնց մեծ մասը ավարտում էր։ Բացի դրանից. համալսարանը ներկայացնում էր միայն լուսավորչական դավանանքի ուսանողության վիճակագրությունը։ Հայ այլադավան և ազատ ունկնդիրներին ընդգրկելու դեպքում հայ շրջանավարտների տոկոսային հարաբերությունը համալսարանի միջինից միշտ էլ բարձր պիտի լիներ։ Այսպես, 1870-ական թթ. համալսարանի շրջանավարտների տոկոսային հարաբերությունը առկա սովորող ուսանողության թվի հետ տատանվում էր 8,6—30,3, իսկ հայերինը՝ 17,9—30,4 տոկոսի միջև[16], 1880-ականին՝ ընդհանուրինը տատանվում էր 12,7—20, իսկ հայերինը՝ 14.5—22.4 տոկոսի միջև[17]։ 1890-ականին՝ ընդհանուրինը տատանվում էր 12,8—16,3, իսկ հայերինը՝ 14.9—26.5 տոկոսի միջև[18]։ Մինչև 1905 թ.՝ ընդհանուրինը տատանվում էր 14.1—13.9. հայերինը՝ 16.3—14.4 տոկոսի միջև[19]։ 1907—1917 թթ. ընդհանուրինը տատանվում էր 4—14.7[20], իսկ հայերինը՝ 4.4—16 տոկոսի միջև։ Միայն 1887—1890 թթ. և 1908—1909 թթ. հայ շրջանավարտների տոկոսային հարաբերությունը հայ ուսանողության հետ զիջում էր համալսարանի միջին մակարդակին. որ. հետևանք էր հայ ուսանողության արագ աճի։ 1886—1890 թթ. հայ ուսանողության աճը կազմում էր 33,3, իսկ համալսարանի միջին աճն էր 6.4 տոկոս[21]։ Այդ նույնը նկատվում է նաև 1905—1910 թթ.. երբ ընդհանուրի միջին աճը կազմում էր 30.6. իսկ հայերինը՝ 53.6 տոկոս[22]։ Միայն 1908—1909 թթ. (երկու տարում) համալսարան էին ընդունվել ավելի քան 369 հայ ուսանողներ[23]։ Մնացած բոլոր տարիներին հայ շրջանավարտների տոկոսը համալսարանի միջին մակարդակից բարձր էր[24]։ Ինչ վերաբերում է 1914 և 1916 թթ. շրջանավարտների անհամեմատ բարձր տոկոսին, ապա դա համալսարանի որոշ ֆակուլտետներում մեկ տարում

---

11 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1876 год., М., 1877, с. 17—20.

12 Տե՛ս Речь и отчет, читанные на торжественном собрании имп. Московского университета за 1899 год. М., 1900, с. 66—96.

13 Տե՛ս նույնը՝ 12-го января 1903 года. М., 1904, «Список удостоенных выпускных свидетельств».

14 Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1910 год. М., 1911, «Список удостоенных выпускных свидетельств».

15 Տե՛ս նույնը՝ за 1915 год. М., 1916, с. 240—276.

16 Տե՛ս նույնը՝ за 1877 год. М., 1878, с. 49. ինչպես նաև՝ Отчеты за 1873 год. М., 1874 с. 43; за 1876 год. М., 1877, с. 17—20; за 1879 год. М., 1880, с. 17—18.

17 Տե՛ս նույնը՝ за 1880 год. М., 1881, с. 57. ինչպես նաև՝ Отчеты за 1889 год. М., 1890, с. 64; Речи и отчеты на 1880 год. М., 1881, с. 34—35; на 1889 год. М., 1890, с. 133—161.

18 Տե՛ս նույնը՝ за 1893 год. М., 1895, с. 81; за 1898 год. М., 1900, с. 100

19 Տե՛ս նույնը՝ за 1902 год. М., 1903, с. 99; за 1904 год. М., 1905, с. 87

20 Տե՛ս նույնը՝ за 1907 год. М., 1908, ведомости № 6 и 7; за 1913 год. М., 1914, с. 239.

21 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1886 год. М., 1888. Приложение № 2-А, с. 114—115 и за 1890 год. М., 1892, диаграмма, с. 158—159.

22 նույնը՝ за 1905 год. М., 1906, ведомость № 6 и за 1910 год. М., 1911, ведомость № 6.

23 նույնը՝ за 1908 год. М., диаграмма, с. 29—30 и за 1909 год. М., 1910, ведомость № 6.

24 Ա. Արշարունու մոտ հայ շրջանավարտների տոկոսային հարաբերությունը լուսավորչական դավանանքի ուսանողության թվի հետ համալսարանի միջինից ցածր է։ Տե՛ս Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան, էջ 212։

երկու անգամ շրջանավարտներ տալու արյունք էր[25]։ Ավարտական քննություններին ավելի հաճ ուսանողներ էին մասնակցում, քան ավարտական կուրսի՝ ավարտական կիսամյակի սովորողներն էին։ Չէ՞ որ հաշվետվություններում արտացոլվում էին միայն լուսավորչական դավանանքի հայ ուսանողներ։ Այսպես, 1899 թ. ավարտական կիսամյակում սովորում էր 15 լուսավորչական դավանանքի ուսանող[26]։ Սակայն հաշվետվություններում տրված ավարտողների ցուցակում նշված է 43 հայ շրջանավարտ[27]։ Այնպես որ սխալ է շրջանավարտների թիվը որոշել ըստ ավարտական կիսամյակի հայ ուսանողների քանակի։ Մանավանդ որ ավարտական կիսամյակի ոչ բոլոր սովորողներն էին ավարտում։

Այսպիսով, 1870—1917 թթ. համալսարանը տվել է ավելի քան 1246 հայ շրջանավարտներ, որոնք իրենց դիտակրթական մակարդակով հայ մտավորականության ընտիր մասն էին կազմում։ Նրանք վայելում էին բարձր հեղինակություն, հատկապես մեծ համբավ ունեին համալսարանավարտ հայ բժիշկները, տնտեսագետները ու իրավաբանները։ 46 տարվա ընթացքում համալսարանի տված 1246 շրջանավարտների 49,3 տոկոսը ստացել էր իրավաբանի կամ տնտեսագետի, 34,8 տոկոսը՝ բժշկի կամ դեղագործի, 11,6 տոկոսը՝ մաթեմատիկոսի, ֆիզիկոսի, բիմիկոսի կամ կենսաբանի, իսկ 4,3 տոկոսը պատմաբանի, գրականագետի կամ լեզվաբանի։ Իրենն էլ մանկավարժի դիպլոմ։ Համալսարանի պատմաբանասիրական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետները, ըստ ուսանողների նախասիրության, պատրաստում էին նաև մանկավարժներ դասական գիմնազիաների և ռեալական ուսումնարանների համար։ Ուսուցչի որակավորում ստանում էին այն ուսանողները, ովքեր ուսումնառության տարիներին մասնակցում էին մանկավարժահոգեբանական խմբակի պարապմունքներին, իսկ վերջում ավարտական աշխատանք էին ներկայացնում մանկավարժությունից ու հոգեբանությունից։

Մոսկվայի համալսարանը XIX դարի 60-ական թթ., հասարակական-մանկավարժական շարժման պահանջներից ելնելով, ժողովրդական լուսավորության մինիստրության դիտական կոմիտեի որոշմամբ, նախապատրաստական աշխատանքներ էր տանում ուսուցիչներ պատրաստելու ուղղությամբ։ Սակայն նորընծա լուսավորության մինիստր Դ. Ա. Տոլստոյը բեկանեց այդ որոշումը, պնդելով այն հնամենի տեսակետը, թե «մանկավարժությունը վարպետություն է, որը ձեռք է բերվում պրակտիկայի ընթացքում»։ Նա չէր ընդունում ուսուցչի հատուկ տեսական նախապատրաստումը բուհում, դրա համար էլ ուսուցչության պաշտոնի ձգտող ուսանողներին համալսարանը մանկավարժական տեսական դիտելիքներ էր տալիս հիմնականում ֆակուլտատիվ դասընթացների միջոցով[28]։ Համալսարանում շատ ուսանողներ էին ցանկանում գիմնազիայի ուսուցչի կոչում ստանալ հատկապես նրա բարձր հարգի համար։ Համալսարանի ավարտական քննական հանձնաժողովը առանձնակի հետաքրքրություն էր ցուցաբերում ուսուցչական կոչմանը նախապատրաստված ավարտողների նկատմամբ։ Գտնելով, որ ուսուցիչները պետք է լինեն ոչ միայն բազմակողմանի զարգացած, այլև վսեմ մարդկային արժանիքներով օժտված ու բարձր կուլտուրայի տեր մարդիկ, աշխատում էին ընտրողաբար շնորհել ուսուցչի որակավորումը։ Նախապատվություն տրվում էր իշխող պետական ուղղափառ դավանանքին պատկանող շրջանավարտներին, քանի որ պահանջվում էր ուղղափառության ոգին սերմանել աճող սերնդի մեջ։ Ուստի շատ քիչ հայ ուսանողներ էին ստանում գիմնազիայի ուսուցչի որակավորումը։ Այսպես, այդ կոչմանը արժանացան ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի շրջանավարտներ, համալսարանի թեկնածու Բարիյան Վարդանը[29], Ղազարյանն ու Մանվելյանը[30],

---

25 1915 թ. բժշկական ֆակուլտետը շրջանավարտ չտվեց՝ 1914 թ. երկու ավարտական տալու կապակցությամբ։ Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1915 год. М., 1916, ведомость № 6.

26 Նույնը՝ за 1899 год. М., 1901, с. 248—249.

27 Տե՛ս Речь и отчет, читанные на торжественном собрании имп. Московского университета 12-го января 1899 года. М., 1900, с. 66—96.

28 Տե՛ս Ф. Г. Паначин. Педагогическое образование в России. М., 1979, с. 75—77.

29 Տե՛ս Речь и отчет, читанные на торжественном собрании имп. Московского университета 12-го января 1886 года. М., 1887, с. 55.

30 Նույնը՝ 12-го января 1888 года. М., 1889, с. 54.

Քոչարյանը[31], Սարգսյանը[32] և ուրիշներ։ Միաժամանակ նկատելի էր, որ «Հայ ուսանողության մեջ առանձին ձգտում չկար ուսուցչի կոչման՝ ոչ թե նրա համար, որ «ուսուցիչ դառնալու հեռանկարը այնքան էլ երազանքի առարկա չէր» կամ նկատի էին առնում «Հայ ուսուցչի իսկապես սննախանձելի վիճակը»[33],—ինչպես գրում է պրոֆ. Ա. Արշարունին, այլ Անդրկովկասում համապատասխան աշխատանքի ասպարեզ չլինելու պատճառով։ Անդրկովկասում խիստ սահմանափակ էր այդպիսի դպրոցների քանակը։ XIX դարի վերջին Կովկասյան ուսումնական օկրուգում գործում էին 23, իսկ XX դարի սկզբին՝ 59 դասական գիմնազիաներ և ռեալական ուսումնարաններ, որոնցից միայն կեսն էր Անդրկովկասում[34]։

Այսպիսով, մասնագիտության ընտրությունը կապված էր Կովկասի սոցիալ-տնտեսական կյանքի պահանջների հետ։

Մոսկվայի համալսարանում հայ ուսանողները հիմնականում կենտրոնացած էին իրավաբանական և բժշկական ֆակուլտետներում։

1879 թ. լուսավորչական դավանանքի հայ ուսանողների 61,8 տոկոսը սովորում էր բժշկական, 20,6 տոկոսը՝ իրավաբանական, 11,8 տոկոսը՝ ֆիզիկամաթեմատիկական, իսկ 5,8 տոկոսը՝ պատմաբանասիրական ֆակուլտետներում[35]։ 1880-ական թթ. երկրորդ կեսերից հայ ուսանողների թիվը սկսել էր ավելանալ նաև ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում[36]։ 1897 թ. իրավաբանական և բժշկական ֆակուլտետների հայ ուսանողության թիվը հավասարվում է. 40,3 տոկոսը սովորում էր բժշկականում, նույնքան էլ իրավաբանականում[37]։ Սակայն 1898—1903 թթ. հայ ուսանողների թվով առաջատար դեր էր կատարում նորից բժշկական ֆակուլտետը, որտեղ 1902 թ. սովորում էր հայ ուսանողության 48 տոկոսը[38]։ Իսկ 1904-ից մինչև 1917 թթ. իրավաբանականը հայ ուսանողների թվով գերազանցում է բժշկականին։ Այսպես, 1910 թ. 532 հայ ուսանողների և աղատ ունկնդիրների 56,8 տոկոսը սովորում էր իրավաբանական, 25,4 տոկոսը՝ բժշկական, 13,3 տոկոսը՝ ֆիզիկամաթեմատիկական և 4,5 տոկոսը՝ պատմաբանասիրական ֆակուլտետներում[39]։ Ըստ ֆակուլտետների 1905—1910 թթ. իրավաբանականում հայ ուսանողությունը աճել էր 73,2 տոկոսով, բժշկականում՝ 44,4, ֆիզիկամաթեմատիկականում՝ 63,4, իսկ պատմաբանասիրականում՝ 50 տոկոսով[40]։ Հայ երիտասարդների թիվը համեմատաբար արագ էր աճել իրավաբանական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում։ Ընդ որում հայ ուսանողները ավելի շատ էին իրավաբանական՝ տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկականի՝ կենսաբանաֆիզիկական բաժիններում։ Դարասկզբին հայ երիտասարդները առավելությունը տալիս էին հատկապես տնտեսագետի մասնագիտությանը։ Այդ նպատակով Թիֆլիսում, Բաքվում և Ալեքսանդրապոլում բացվեցին միջնակարգ առևտրատնտեսագիտական (կոմերչեսկի) ուսումնարաններ, որտեղ բազմաթիվ հայեր էին սովորում։ Օրինակ, 1916/17 ուսումնական տարում Անդրկովկասի բոլոր 6 (2 իգական) միջնակարգ «կոմերչեսկի» ուսումնարանների 2554 (345 իգ.) սովորողներից 1534-ը (130 իգ.) կամ 60,1 տոկոսը հայեր էին[41]։ Դրանցից շատերը դիմում էին նաև Մոսկվայի համալսարանի տնտեսագիտական բաժինը։ Դրանով էր պայմանավորված իրավաբանական ֆակուլտետի հայ ուսանողության արագ աճը։

---

31 Նույնը՝ 12-го января 1889 года. М., 1890, с. 161.

32 Նույնը՝ 12-го января 1891 года. М., 1892, с. 70.

33 Ա. Արշարունի. նշվ. աշխ., էջ 213։

34 Տե՛ս Отчет попечителя Кавказского учебного округа о состоянии учебных заведений за 1900 год. Тифлис, 1901; за 1916 год. Тифлис, 1917.

35 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1879 год. М., 1880, с. 102—103.

36 Նույնը՝ за 1885 год. М., 1877, с. 114—115.

37 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1897 год. М., 1899, с. 246—247.

38 Նույնը՝ за 1902 год. М., 1903, с. 258—259, диаграмма.

39 Տե՛ս Алфавитный список студентов и посторонних слушателей имп. Московского университета за 1909—1910 академический год. М., 1910.

40 Տե՛ս Отчет о состоянии деятельности имп. Московского университета за 1904 год. М., 1905, с. 276—277, диаграмма.

41 Տե՛ս Кавказский календарь на 1917 год. Тифлис, 1916, с. 546—556.

Պատմաբանասիրականը ամենաքիչ ուսանողներ ունեցող ֆակուլտետն էր, որտեղ հայերի թիվը սկսեց ավելանալ միայն 1903 թ.[42] հետո։ 1909/10 ուսումնական տարում այս ֆակուլտետում սովորում էին արդեն 24 հայ երիտասարդներ[43]։

Այսպիսով, ելնելով կովկասահայ հասարակական կյանքի պահանջներից, հայ երիտասարդները նախընտրում էին իրավաբանի, բժշկի, տնտեսագետի, որոշ չափով նաև բնագետի մասնագիտությունները, որոնք խիստ նպաստավոր էին ապագա գործիչի, և անհրաժեշտ՝ իր ժամանակի կենսական պահանջների բավարարման համար։

Անշուշտ, համալսարանի հայ ուսանողությունը իր աշխարհայացքով չէր կարող լինել միատարր։ Գտնվելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի և ռուսական հեղափոխական շարժումների ազդեցության ոլորտում, Կ. Մարքսի տնտեսագիտական ուսմունքի միջոցով[44] ծանոթանալով հասարակական կյանքի մատերիալիստական ըմբռնմանը, նրա հիմնական մասը հատկապես XX դարի սկզբին քայլում էր ռուս հեղափոխական ուսանողության հետ։ Դրան նպաստում էր առաջին հերթին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, ինչպես և որոշ չափով հայ ուսանողության սոցիալական ծագումը։ Հայ ուսանողները հիմնականում խոշոր և մանր ձեռնարկատերերի, արդյունաբերողների, առևտրականների, գյուղական հարուստների և հոգևորականների զավակներն էին։ Որպես այդպիսիք նրանք ռուս համանման խավերի ուսանողության հետ պայքարում էին համալսարանում իշխող կրթության դասայնության համակարգի դեմ, որը որոշակի արտոնություններ էր տալիս ազնվականների, բարձրաստիճան չինովնիկների, ինչպես և իշխող ուղղափառ դավանանքի հոգևորականների զավակներին։ Նման խտրականությունը որոշակիորեն ուժեղացնում էր այսպես կոչված «ակադեմիական» ուսանողների ոգին, խորացնում նրանց և բուրժուական խավերի ներկայացուցիչների միջև գործող հակասությունը, թուլացնում ուսանողական ելույթների միասնականությունը։

1876 թ. տվյալները ցույց են տալիս, որ համալսարանի ուսանողների 54,7 տոկոսը տոհմիկ և անձնյա ազնվականների, 17,5-ը՝ հոգևորականների և միայն 27,8 տոկոսը՝ բուրժուազիայի և նրան հարող այլ խավերի զավակներն էին[45]։ Այդ նշանակում է, որ համալսարանը մնում էր որպես դասային կրթության հաստատություն։ Մեղադրելով նարոդնիկ Յուժակովին կրթության դասային և դասակարգային բնույթը չհասկանալու մեջ, Վ. Ի. Լենինը նշում էր, որ բուրժուազիան դատապարտում է կրթության դասայնությունը, որը «սովորողից պահանջում է նրա պատկանելությունը ազնվական դասին և պայքարում է հօգուտ դասակարգային դպրոցի, որը հավասարություն է պահանջում բոլոր «կրթության ծախսը մուծողների համար»[46]։ Այդ պայքարը է՛լ ավելի սուր բնույթ կրեց XIX դարի վերջերից սկսած, երբ Ռուսաստանում հանդես եկան սոցիալիստ-հեղափոխականների և սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունները, որոնց գործունեությունը կոնկրետություն մտցրեց ուսանողական շարժումների մեջ։ Ըստ Վ. Ի. Լենինի, ուսանողության հեղափոխական մասը սկսեց ընտրություն կատարել այդ երկու կուսակցությունների միջև[47], որի հետևանքով խախտվեց հեղափոխական ուսանողության միասնականությունը. նրանց մի մասը հարեց սոցիալիստ-հեղափոխականներին, իսկ առավել առաջադեմ մասը՝ սոցիալ-դեմոկրատներին։

Հայ ուսանողները հիմնականում քայլում էին հեղափոխական ուսանողության հետ, որոնց մեծ մասը XX դարի սկզբին համախմբվեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության դրոշի ներքո։ 1903 թ. Վ. Ի. Լենինը գրում էր, որ ուսանողության որոշ մասը ձգտում է մշակել իր համար «որոշակի և ամբողջական սոցիալիստական աշխարհայացք», ուստի պահանջում էր նրանց մեջ ուժեղացնել «գիտական սոցիալիզմի, այսինքն մարքսիզմի»[48] պրոպագանդան։ Հենց Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության այդ մասը տվեց լենինյան

---

42 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1903 год. М., 1904, с. 262—263, диаграмма.

43 Տե՛ս Алфавитный список студентов и посторонних слушателей имп. Московского университета за 1909—1910 академический год. М., 1909.

44 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1896 год. М., 1898, с. 55, 249.

45 Տե՛ս նույնը՝ за 1876 год. М., 1877, с. 11.

46 В. И. Ленин. О воспитании и образовании. М., 1970, с. 29.

47 Տե՛ս նույն տեղում, էջ 100։

48 Նույն տեղում, էջ 102։

գվարդիայի այնպիսի բոցաշունչ մարտիկներ, ինչպիսիք էին Ս. Սպանդարյանը, Ա. Մյասնիկյանը, Վ. Տերյանը, Գ. Կորզանովը (Ղորղանյանը), Գ. Աթարբեկյանը, Ս. Հովսեփյանը, Գ. Խախանյանը, Ս. Համբարձումյանը և ուրիշները։

Միաժամանակ պետք է նշել, որ համալսարանում որակ չէին կազմում աշխատավոր խավերի՝ բանվորների և գյուղացիների զավակները։ Եթե հայերից այդպիսիք սովորում էին, ապա միայն մեկենասների կամ հասարակական գերատեսչությունների ծախսով։

Համալսարանի ադմինիստրացիան նման սոցիալական ծագմամբ ուսանողների համար հատուկ՝ «այլ խավերից» անվամբ սյունակ բացեց հաշվետվություններում միայն 1908 թ., երբ նրանք կազմում էին բոլոր ուսանողների 1 տոկոսը[49]։ Ընդ որում դրանց մեծ մասը ստորին տարբեր խավերի զավակներ էին։

Համալսարանում սովորում էին հիմնականում հայ գյուղական վերնախավի զավակները։ Այսպես, 1909/10 ուսումնական տարում համալսարանի 532 հայ ուսանողների 15 տոկոսը (80 հոգի) հայկական գյուղերից էին։ Հատկապես 'աչքի էր ընկնում Վերին-Ադուլիս գյուղը, որտեղից համալսարանում սովորում էին 3 հոգի, իսկ 30 հոգի էլ սովորում էին Երևանի նահանգի ու Կարսի մարզի գյուղերից։ 16 հոգի սովորում էին Թիֆլիսի նահանգի, 10-ը՝ Շուշիի, 5-ը՝ Ելիզավետպոլի, 5-ը՝ Զանգեզուրի, 5-ը՝ Շամախու գավառներից։ Կային ուսանողներ նաև Հյուսիսային Կովկասի ու Պարսկաստանի որոշ հայկական գյուղերից։ Հիշյալ ուսումնական տարում համալսարանի հայ ուսանողության 85 տոկոսը (452 հոգի) շուրջ 50 հայաբնակ քաղաքներից էին, որից 78-ը միայն Թիֆլիսցիներ, 40-ը՝ նորնախիջևանցիներ, 38-ը՝ բաքվեցիներ, 30-ը՝ շուշեցիներ, իսկ 23-ը՝ երևանցիներ[50]։

Անդրադառնալով հայ ուսանողության գործունեությանը, պետք է նշել նրա գործուն մասնակցությունը համալսարանի արտաքին և ներքին սոցիալ-քաղաքական ու մտավոր կյանքին։ «Ռուսական քաղաքակրթության այս տաճարում» (Ա. Ի. Գերցեն) հատկապես XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հայ առաջադեմ ուսանողությունը կոփվեց ոչ միայն մտավորապես, այլ նաև քաղաքականապես։ Նրանց մի մասը 1860-ական թթ., համախմբված Ս. Նազարյանի «Հյուսիսափայլի» շուրջը, մեծ թափ հաղորդեց հայ ժողովրդի մտավոր զարթոնքին։ Ոմանք էլ հետևելով Մ. Նալբանդյանին՝ դարձան հեղափոխական-դեմոկրատական շարժման ջատագովներ։ Նրանք մասնակցում էին ռուսական նարոդնիկական շարժմանը, սկսած 1870—80-ական թթ. ծանոթանում մարքսիստական հայացքներին։ Այսպես, 1875 թ. Կ. Մարքսի թեզերը կապիտալիստական բանկային գործողությունների մասին իր դիսերտացիայում օգտագործել էր Դավել Դամբարովը (Պողոս Ղամբարյանը), որից 1878—79 ուսումնական տարում օգտվել էր Պետերբուրգի համալսարանի ուսանող Հակոբ Տիգրանովը. կապիտալիստական բիրժույին նվիրված իր ավարտական աշխատանքի մեջ նա հատուկ ենթարաժին էր նվիրել Կ. Մարքսի հավելյալ արժեքի տեսությանը։ Ուսանողի աշխատանքը արժանացավ համալսարանի գիտխորհրդի հավանությանը, թեկնածուական աստիճանի, ոսկե մեդալի ու հրատարակվեց[51]։ Թեև երբեմն դիսերտացիաներում մարքսիստական տնտեսագիտական ուսմունքը ներկայացվում էր խեղաթյուրված՝ կոնսերվատիզմի կամ նարոդնիկության դիրքերից, բայց ուսանողությունը հնարավորություն էր ստանում ծանոթանալու մարքսիզմի գաղափարներին։ Մանավանդ որ Կ. Մարքսի որոշ աշխատություններ ներկայացվում էին թարգմանաբար, որպես լրացուցիչ գրականություն ուսանողության համար։ Այսպես, 1896 թ. Մոսկվայի համալսարանի քաղտնտեսության և վիճակագրության դասախոս, նարոդնիկ Ա. Մանուիլովի խմբագրությամբ հրատարակվեց Կ. Մարքսի «Քաղտնտեսության մի քանի գրույթների քննադատություն» աշխատությունը[52]։

Ուսանողական ժողովներում, գիտական խմբակներում, ընկերություններում արծարծում էին Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցերը։ Ուսանողները կոչեր էին հրա-

---

49 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1908 год. М., 1909, с. 29—30, диаграмма.

50 Տե՛ս Алфавитный список студентов и посторонних слушателей имп. Московского университета за 1909—1910 академический год. М., 1909.

51 Տե՛ս Протоколы заседаний совета имп. С. Петербургского университета за первую половину 1878—1879 академического года. С приложением № 19. С.-Петербург, 1879, с. 1.

52 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1896 год. М., 1898, с. 55, 249.

պարակում արևմտահայերի ծանր քաղաքական ու տնտեսական վիճակի մասին։ Հայ ուսանողությանը օգնության էին հասնում որոշ հայ և ռուս դասախոսներ, որոնք 1890-ական թթ. համալսարանում հրատարակվող «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»[53] ժողովածուի շուրջը համախմբված, իրենց ծանրակշիռ հոդվածներով հանդես էին գալիս ի պաշտպանություն արևմտահայերի։ Հայ ուսանողությունը, հատկապես արևմտահայերի հարստահարության ու ծանր կացության պայմաններից ելնելով, քայլ առ քայլ մոտենում էր սոցիալական հեղափոխության գաղափարին։ Այդ հարցում նրանց օգնում էին մարքսիստական գաղափարները ու գրականությունը, հատկապես Վ. Ի. Լենինի բոցաշունչ ելույթները, որոնք տարածվում էին ուսանողների մեջ։

Հայ ուսանողները իրենց գիտական պրպտումներով հաճախ էին արժանանում ռուս ականավոր գիտնականների հավանությանը, շահում համալսարանում հայտարարված մրցանակները, ստանում ոսկե կամ արծաթե մեդալներ, առաջին կարգի դիպլոմ[54] և համալսարանի թեկնածուի աստիճան[55] կամ «իսկական ուսանողի» կոչում[56]։ Այսպես, 1871 թ. իրավաբանական ֆակուլտետը համալսարանի թեկնածուի աստիճանով ավարտեցին Ն. Ներսիսյանը, Հ. Մելիք-Բեգլարյանը, Գ. Չերքեզյանը, Գ. Հալաբյանը, Ա. Ղազարյանը, Ա. Երիցփոխյանը, Բ. Դոլուխանյանը, Ա. Դանիելբեգյանը և ուրիշները[57]։ 1888 թ. ավելի քան 10 հայ ուսանող համալսարանը ավարտեցին թեկնածուի աստիճանով (այդ թվում 6-ը բժշկական գիտության), իսկ 4-ը՝ «իսկական ուսանող» կոչումով[58]։ Շատ հայ ուսանողների գիտական աշխատանքները արժանանում էին «պատվավոր կարծիքի», նյութական պարգևի կամ համալսարանում սահմանված այլ մրցանակի։ Այսպես, 1880 թ. բժշկական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Խ. Բահաթրյանի ավարտական աշխատանքը արժանացավ «պատվավոր կարծիքի»[59]։ Նման կարծիքի արժանացավ նաև ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի շրջանավարտ Ա. Տեր-Հովակիմյանի աշխատանքը[60]։ Շատ քչերի գիտական աշխատանքներն էին արժանանում անվանի գիտնականների «պատվավոր կարծիքին»։ Այդ կարծիքը ուսանողի ինքնուրույն գիտական աշխատանքների գնահատման չափանիշներից էր, որը տրվում էր տվյալ դիսցիպլինի ճանաչված գիտնականի

---

53 *Տե՛ս* Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1897 год. М., 1899, с. 33.

54 *Ուսանողների գիտական մակարդակը բարձրացնելու նպատակով 2-րդ կուրսից առաջադրվում էին գիտական աշխատանքի թեմաներ, որոնցից լավագույնները արժանանում էին ոսկե ու արծաթե մեդալների, «պատվավոր կարծիքի», նյութական պարգևի կամ շահում էին նախապես սահմանված մրցանակը, իսկ գիտական արժեք ունեցող աշխատանքները հրատարակվում էին հեղինակային իրավունքով։ Խրախուսանքի այդ ձևերը ուսանողին առավելություններ էին տալիս համալսարանի թեկնածուի աստիճան, «իսկական ուսանողի» կոչում, դիֆերենցված դիպլոմ ստանալու և աշխատանքի նշանակվելու ժամանակ։ Այդ բոլորը նպաստում էր ուսանողի գիտական հետաքրքրությունների և պահանջմունքների զարգացմանը, ակտիվացնում նրանց ուսումնական գործունեությունը։*

55 *Միջնադարյան եվրոպական, իսկ հետագայում նաև ռուսական համալսարաններում մինչև 1917 թ. այդ գիտական աստիճանը շնորհվում էր լավագույն շրջանավարտներին, որոնք ներկայացնում էին ավարտական գիտական արժեք ունեցող աշխատանք։ Նմաններին իրավունք էր վերապահվում մնալ համալսարանում և պատրաստվել գիտական և պրոֆեսորական գործունեության։*

56 *Միջնադարյան համալսարաններում ընդունված գիտական այս կոչումը շնորհվում էր այն շրջանավարտներին, որոնք ուսումնառության տարիներին ցուցաբերել էին բարձր առաջադիմություն, համալսարանն ավարտել գերազանց հաջողությամբ, բայց ավարտական աշխատանք չէին ներկայացրել։ Ռուսական համալսարաններում այդ կոչումը պահպանվեց մինչև 1894 թ.։*

57 *Տե՛ս* Отчет о состоянии и действиях имп. Московского университета в 1870—71 академическом и 1871 гражданском году. М., 1872, с. 46, 48—52.

58 *Տե՛ս* Речь и отчет, читанные на торжественном собрании имп. Московского университета 12-го января 1888 года. М., 1889, с. 28—51.

59 *Տե՛ս* Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1880 год. М., 1881, с. 24.

60 *Նույնը՝* за 1890 год. М., 1892, с. 28.

կողմից և ոսկե ու արծաթե մեդալների հետ հանդիսանում էր խրախուսանքի բարձրագույն աստիճաններից մեկը։ Գիտնականը պատասխանատու էր իր կարծիքի համար, ուստի այն տրվում էր անձնական և մասնագիտական բարձր պատասխանատվության զգացմունքով։ Նման խրախուսանքը հանդիսանում էր ապագա մասնագետի հեղինակության բարձրացման խթանիչ պայմաններից մեկը, որը առանձնակի հպարտություն էր ներշնչում շրջանավարտին։

Շատ հայ ուսանողների գիտական աշխատանքները արժանանում էին ոսկե մեդալների և գիտությունների թեկնածուի աստիճանի։ Այսպես, ոսկե մեդալով և համալսարանի թեկնածուի աստիճանով 1885 թ. ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը ավարտեց Ա. Քալանթարյանը, իսկ իրավաբանականը՝ Ս. Թուխաչյանը[61], Մ. Ստեփանյանը (Խ. Ստեփանեն), Մ. Խիտարյանը, Ս. Սարգսյանը և շատ ուրիշներ իրենց ներկայացրած գիտական աշխատանքի համար ստացան պատմաբանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան[62]։ Նույն ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանող Պետրոսյանցի «Թագավորական կառավարությունը հին Հունաստանում» աշխատությունը արժանացավ Ա. Ա. Սաղիկովի անվան մրցանակի[63]։

Երբեմն, նկատի ունենալով հատկապես լազարյան ճեմարանից ընդունվածների նախասիրությունները, համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի համապատասխան ամբիոնները մրցույթի համար առաջադրում էին հայագիտական թեմաներ։ Նման իրողությունը ավելի էր ակտիվացնում ու քաջալերում հայ ուսանողներին և նպաստում հայագիտության զարգացմանը համալսարանում։

Տեղին է նշել, որ հատկապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, 1895—1896 թթ. հայկական կոտորածների, 1914—1917 թթ. առաջին համաշխարհային պատերազմի և Մեծ եղեռնի տարիներին համալսարանում հայագիտությանը լուրջ տեղ էր հատկացվում։ Հայ ուսանողները գիտաժողովներում հանդես էին գալիս հայկական կյանքին, հայոց լեզվին, պատմությանը, հնագիտությանը, ճարտարապետությանը վերաբերող հոդվածներով, ռեֆերատներով, ավարտական աշխատանքներով։ Անշուշտ, այդ թելադրվում էր առաջին հերթին քաղաքական նկատառումներով, ինչպես և հայագիտության, որպես Եվրոպայում և Ռուսաստանում ճանաչված գիտության, ուսումնասիրության անհրաժեշտությամբ։

Հայագիտության բնագավառում հայ ուսանողների մշակած թեմաները արժանանում էին ռուս անվանի գիտնականների բարձր գնահատականին։ Այսպես, 1880 թ. չորրորդ կուրսի ուսանող Գալուստ Ջարխչյանի գիտական ռեֆերատը հայոց հին ու նոր լեզուների մասին՝ ռուս ականավոր գիտնական Ֆ. Ի. Բուսլաևի կողմից ներկայացվեց մրցանակի[64]։ Համալսարանում հայագիտության ակտիվ պրոպագանդողներից էին Մկրտիչ Էմինը, Սեմյոն Սուլթանշահը (հետագայում գեներալ), Ղազարոս Բուդաղյանը (հետագայում Պետերբուրգի համալսարանի դասախոս), Սմբատ և Արմենակ Շահազիզները, «Գամառ-Քաթիպայիս» խմբակի անդամները, Ս. Նազարյանն ու Մ. Նալբանդյանը, Խ. Ստեփանեն, Իվան Պոպովը (Հովհաննես Տեր-Գրիգորյանը), Ա. Ջիվելեգովը, Բ. Խալաթյանը, Ի. Ռաֆայելյանը, Ց. Խանզադյանը, Վ. Տերյանը և հատկապես համալսարանի լեզվաբանության դոկտոր Լ. Մսերյանն ու հայ գրականության մագիստրոս Գ. Խալաթյանը, ինչպես և ռուս գիտնական՝ Ռուսաստանի պատմության մագիստրոս, պրիվատ-դոցենտ Լիննիչենկոն, որի «Լվովի հայերի պատմությունը» աշխատությունը[65] 1893 թ. լույս տեսավ (հայերեն) համալսարանի գիտական ժողովածուի մեջ։

Ազգային կյանքին վերաբերող յուրաքանչյուր եղելություն իր արձագանքն էր ստանում հայ ուսանողության շրջանում։ Կարսի ռազմաճակատի բժշկապետ Իշխան Մեսչերսկին իր հիշողություններում, հիացած հայ երիտասարդների մարտական գործողություններով, նշում էր, որ նրանք կյանքը չեն խնայում, զոհվում են հայրենիքի փրկության հույսով տարված, քանի որ

---

[61] Տե՛ս Речь и отчет, читанные на торжественном собрании 12-го января 1855 года. М., 1886, с. 63.

[62] Տե՛ս Отчет о состоянии и действиях имп. Московского университета в 1874—75 академическом и 1875 гражданском году. М., 1876, с. 19. Նույն՝ Речь и отчет, читанные на торжественном собрании 12-го января 1878 года, М., 1879, с. 176.

[63] Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1905 год. М., 1906, с. 49.

[64] Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1880 год. М., 1881, с. 24.

[65] Նույնը՝ за 1893 год. М., 1895, с. 173; за 1894 год. М., 1895, с. 76.

համոզված էին, որ մարտնչում են իրենց ժողովրդի ազատության համար։ Հայ ուսանողները կամավոր մեկնեցին նաև ռուս-ճապոնական ռազմաճակատ։ Բժշկական ֆակուլտետի մի խումբ հայ ուսանողներ, Ա. Ե. Բաբասինյանի գլխավորությամբ, իրենց ռուս ընկերների հետ, ուսումը չավարտած, մեկնեցին գործող բանակ (1905 թ.), վեց ամիս անց ռազմաճակատից վերադարձան հերթական քննությունները հանձնելու[66]։ Այդ փաստերը վկայում են, որ Մոսկվայի համալսարանը նպաստում էր հայ ուսանողների հայրենասիրական և ռուս ժողովրդի նկատմամբ բարեկամության ու նվիրվածության զգացմունքների դաստիարակությանը, որն իր դրական նշանակությունը ունեցավ ինչպես հայ ազգային-ազատագրական պայքարի, նույնպես և ռուսական համընդհանուր հեղափոխության գործում։

Մոսկվայի համալսարանը լուրջ աշխատանք է կատարել հայազգի գիտնականների պատրաստման ուղղությամբ։ Համալսարանի համապատասխան ամբիոնները, դասախոսական կազմը հատուկ զգուշություն և պահանջկոտություն էին ցուցաբերում ապագա գիտական կամ դասախոսական գործունեության համար տաղանդավոր ուսանողների ընտրության հարցում։ Որպես կանոն այսպիսիները ընտրվում էին միայն այն շրջանավարտներից, ովքեր ուսման տարիներին, առաջին կուրսից մինչև ավարտական քննությունները, կցված են եղել համապատասխան մասնագիտությունների պրոֆեսորներին կամ դոցենտներին՝ խորացնելու համար իրենց գիտելիքները նախասիրած գիտության մեջ, ակտիվորեն մասնակցել են տվյալ գիտության խմբակի պարապմունքներին, տրված զեկուցումներն ու ռեֆերատները արժանացել են դասախոսների հավանությանը, մրցանակաբաշխության գիտական թեմաների մշակման համար ստացել են ոսկե կամ արծաթե մեդալ, կամ պրոֆեսորի պատվավոր կարծիքը, կամ սահմանված թոշակը և իրավունք՝ ավարտական կուրսում հիշյալ աշխատությունը հարստացնելու և պաշտպանելու որպես թեկնածուական դիսերտացիա։ Համալսարանի գիտխորհուրդը ապագա դասախոսապրոֆեսորական գործունեության նախապատրաստվողին կամ մագիստրոսական ու դոկտորական քննություններ հանձնողին (այդպես էր կոչվում գերազանցության դիպլոմով ու թեկնածուական աստիճանով շրջանավարտ երիտասարդը) հաստատում էր ֆակուլտետի գիտխորհրդի առաջարկությամբ։ Եթե հիշյալ պայմանները բացակայում էին, ապա շրջանավարտն այդ մասին անգամ մտածելու, իսկ ֆակուլտետային խորհուրդը այդպիսինին առաջ քաշելու իրավունք չունեին։ Ընտրվածներին կցում էին համապատասխան ամբիոններին, որպես պրոֆեսորի ասիստենտ, լաբորանտ, բժշկության գծով նաև օրդինատոր[67], պրոզեկտոր[68], պրովիզոր[69] և այլն։ Գլխավորն այն էր, որ ապագա գիտնական-դասախոսի պատրաստումը կատարվում էր իր գործին քաջահմուտ պրոֆեսորի կամ դոցենտի անմիջական ղեկավարությամբ՝ գործնականորեն, որի ընթացքում հայցողը հնարավորություն ուներ ստանալու ամենօրյա օգնություն կամ լրացուցիչ հանձնարարություն իր ղեկավարից։ Ընտրված թեկնածուները լինում էին թոշակով և առանց թոշակի՝ այսօրվա հեռակայողների նման։ Թոշակավորվածները նյութապես ապահովված էին և մեծ մասամբ երկու տարում կարողանում էին պաշտպանել մագիստրոսական կամ դոկտորական դիսերտացիան, իսկ առանց թոշակի թեկնածուները պաշտպանում էին տարբեր ժամկետներում։ Այսպես, 1863 թ. համալսարանի բժշկական ֆակուլտետում թողնվեց Թիֆլիսեցի Միքայել Շահ-Պարոնյանցը, որը 1865 թ. պաշտպանեց դոկտորական դիսերտացիա։ Նա

---

66 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1905 год. М., 1906, с. 113.

67 Օրդինատոր էր կոչվում ռազմական հոսպիտալի բժիշկը, որը ղեկավարում էր հիվանդանոցի բաժանմունքի կամ պալատի բուժման գործը։ Նա գլխավոր բժշկի օգնականն էր. ըստ կոչման լինում էր կրտսեր և ավագ օրդինատոր։

68 Պրոզեկտորը նախահեղափոխական համալսարանների բժշկական ֆակուլտետներում գիտական պաշտոն էր, որը տրվում էր ամբիոններին կից համապատասխան գիտությունների ուսումնասիրությամբ զբաղվողներին։ Այն համապատասխանում էր ասիստենտության աստիճանին. մեծ հիվանդանոցներում պրոզեկտորները դիագնոզները ճշտելու համար դիահերձում էին անում։

69 Պրովիզորը դեղագործության մեջ աշխատելու համար երրորդ աստիճանն էր՝ դեղատան աշակերտից և օգնականից հետո։ Այդ աստիճանը իրավունք ուներ հայցելու նա, ով համալսարանում համապատասխան քննություններ հանձնելուց հետո առնվազն երեք տարի աշխատում էր որպես դեղագործ։

համալսարանի «Ֆիզիկական-բժշկական ընկերության» անդամ էր[70]։ Բժշկական ֆակուլտետում էր աշխատում բժշկական գիտությունների դոկտոր Գ. Քյուլբարյանցը[71]։ Ռուսաստանի ժողովրդական լուսավորության մինիստրության թոշակով (տարեկան 600 ռ.) 1871 թ. այդտեղ դասախոսական-պրոֆեսորական գործունեության համար. իրավաբանական ֆակուլտետում թողնվեց շուշեցի Ներսես Իոսիֆի Ներսիսյանը (1848—1894)[72]՝ հետագայում իրավաբանական գիտությունների դոկտոր, Մոսկվայի համալսարանի վաստակավոր օրդինար-պրոֆեսոր, իրավաբանական ֆակուլտետի դեկան, ուսումնական մասի պրոռեկտոր։ Իրավունքի փիլիսոփայության ամբիոնում 1875 թ. աշխատանքի պահվեց թիֆլիսեցի Պողոս Ստեփանի Գամբարովը (Ղամբարյանը)[73]։ 1880 թ. ժողովրդական լուսավորության մինիստրության թոշակով (տարեկան 600 ռ.) իրավագիտության ամբիոնում թողնվեց դավալուեցի (արարատցի) Սողոմոն Եղիազարյանը[74] (հետագայում Կիևի համալսարանի օրդինար-պրոֆեսոր), իսկ 1881 թ.՝ թիֆլիսեցի Յուրի Ստեփանի Գամբարովը (Ղամբարյանը), հետագայում ցիվիլիստ-սոցիոլոգ, իրավաբանական գիտությունների դոկտոր, վաստակավոր օրդինար-պրոֆեսոր[75]։ 1891 թ. բժշկական ֆակուլտետի պաթոլոգիական անատոմիայի ամբիոնում թողնվեց ստավրոպոլցի Գերասիմ Վլասովիչ Վլասովը (Կարապետ Վլասյան), հետագայում բժշկական գիտությունների դոկտոր, նույն ամբիոնի պրոֆեսոր[76]։ 1891 թ. բժշկական գիտությունների դոկտորի աստիճան ստացավ Շահինյանը[77], որը դասախոսում էր բժշկական ֆակուլտետում դոցենտի կոչումով[78]։ 1891 թ. առանց թոշակի երկու տարով համնմատական լեզվաբանության ամբիոնում պահվեց Լևոն Մսերյանը, համալսարանի ապագա անվանի արևելագետ դոկտոր-պրոֆեսորներից մեկը[79]։ 1900 թ. կենդանաբանության ամբիոնում երկու տարով թողնվեց (առանց թոշակի) Կոստանդին Գրիգորյանը[80], իսկ 1902 թ. Արդության-երկայնաբազուկը պաշտպանեց դեղագործի մագիստրոսի աստիճան. հետագայում նա Կազանի համալսարանի համապատասխան ամբիոնի վարիչն էր[81]։ 1893 թ. բժշկական գիտությունների դոկտորի աստիճանը պաշտպանեց Մինաղյանը[82], իսկ 1896 թ.՝ Գասպարյանը[83]։ 1880-ական թթ. համալսարանում ֆրանսերեն էր դասավանդում Գեմշյանը[84], իսկ հայոց լեզու՝ Գրիգոր Արտեմի Խալաթյանը[85], 1909 թ. քաղաքաշինության և վիճակագրության ամբիոնում մնաց (թոշակով) Միքայել Ներսեսի Ներսիսյանը՝ Ն. Ի. Ներսիսյանի տղան[86]։ Հիշյալ թվականին քրեական իրավունքի ամբիոնում պահեցին Մովսես (Մոիսեյ) Սե-

---

70 Տե՛ս Отчет о состоянии и действиях имп. Московского университета в 1864—65 академическом и 1865 гражданском году. М., 1866, с. 25—26.

71 Տե՛ս Отчет и речь, произнесенные на торжественном собрании имп. Московского университета 12-го января 1872 года. М., 1873, с. 11.

72 Տե՛ս Отчет о состоянии и действиях имп. Московского университета в 1870—71 академическом и 1871 гражданском году. М., 1872, с. 46.

78 Отчет о состоянии и действиях имп. Московского университета в 1874—75 академическом и 1875 гражданском году. М., 1876, с. 10.

74 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1880 год. М., 1881, с. 120 или приложение № 7 Д.

75 Տե՛ս Речь и отчет, читанные на торжественном собрании имп. Московского университета 12-го января 1881 года. М., 1882, с. 34.

76 Նույնը՝ 12-го января 1891 года. М., 1892, с. 9, а также за 1892 год. М., 1893, с. 8.

77 Նույնը՝ 12-го января 1891 года. М., 1892, с. 69—70.

78 Նույնը՝ 12-го января 1901 года. М., 1902, с. 16.

79 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1891 год. М., 1893, с. 175.

80 Նույնը՝ за 1900 год. М., 1901, с. 285.

81 Նույնը՝ за 1902 год. М., 1903, с. 81.

82 Տե՛ս Речь и отчет, читанные на торжественном собрании имп. Московского университета 12-го января 1893 года. М., 1894, с. 111.

83 Նույնը՝ 12-го января 1896 года. М., 1897, с. 189.

84 Նույնը՝ 12-го января 1897 года. М., 1898, с. 119.

85 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1906 год. М., 1907, с. 279.

86 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1913 год. М., 1914, с 183.

բորի (Սերգեևիչ) Ամեմյանին[87]։ 1913 թ. քաղտնտեսության մագիստրոսի աստիճանը պաշտպանեց Բրյուսելի համալսարանի սոցիալական գիտությունների դոկտոր, քաղտնտեսության ամբիոնի պրիվատ-դոցենտ Վահան Թոմիչ (Թովմասի) Տոտոմյանը[88]։ Այդ տարիներին իրավաբանական ֆակուլտետի միջազգային իրավունքի ամբիոնում էր աշխատում պրիվատ-դոցենտ Ալեքսանդր Ներսեսովիչ Ներսիսյանը՝ Ն. Ի. Ներսիսյանի տղան[89]։ 1913 թ. բժշկական ֆակուլտետի մանկաբարձական հիվանդությունների ամբիոնում էր աշխատում պրիվատ-դոցենտ Գաբրիել Գրիգորի Գամբարովը (Ղամբարյանը), հետագայում՝ բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր[90]։ Այդ տարիներին բժշկական գիտությունների դոկտորական դիսերտացիաներ պաշտպանեցին Թարխանյանը[91], Բահաթրյանը[92], Քեփինյանը[93], Գ. Գ. Գամբարովը[94]։ 1914 թ. Մ. Ն. Ներսիսյանը պաշտպանեց քաղտնտեսության մագիստրոսի աստիճանը[95]։ Նույն թվականին առանց թեկնածուական փիլիսոփայության ամբիոնում երկու տարով մնաց Ս. Պ. Մանսուրովը (Սարդիս Պողոսի Մանսուրյանը)[96], իսկ մաքուր մաթեմատիկայի ամբիոնում՝ Ն. Գ. Կոգպետիլովը (Երվանդ Հովսեպի Լյանցը)[97], քիմիայի ամբիոնում՝ Միքայել Բահաթրյանը[98], իրավունքի պատմության ու փիլիսոփայության ամբիոնում՝ Ստեփանոս Աստվածատուրի Քեչեկյանը[99]։ Մագիստրոսական և դոկտորական քննությունների համար բժշկական ֆակուլտետի պաթոլոգիայի և անատոմիայի ամբիոնում թեկնածու թողնվեց (1904 թ.) Կոստանդին Հակոբի Բաբայանը[100], իսկ կենդանաբանության ամբիոնում՝ Կոստանդին Գրիգորյանը (1900 թ.)[101]։ 1915 թ. համալսարանում էր աշխատում ֆիզիկայի պրիվատ-դոցենտ Սերգեյ Լևոնտիի Բաստամովը (Բաստամյանը)[102]։ 1916 թ. բժշկական գիտությունների գծով դոկտորական դիսերտացիա պաշտպանեց Ներսիսյանը[103], իսկ Մյունխենի համալսարանի քաղտնտեսության դոկտոր Մենտոր Աբրահամի Բունիաթյանը պաշտպանեց քաղտնտեսության մագիստրոսի աստիճանը[104]։ Հիշյալ թվականին հռոմեական իրավունքի ամբիոնում պահվեց Մ. Բահաթրյանը[105], իսկ քաղտնտեսության վիճակագրության ամբիոնում՝ Ցալխուշյանցը[106]։

Մոսկվայի համալսարանը 1860—1917 թթ. աճեցրել է բազմաթիվ հայազգի գիտաշխատողներ և դասախոսներ, որոնք որոշակի դեր են խաղացել ոչ միայն ռուսական, այլև հայկական գիտության ու հատկապես բուհական կրթության զարգացման, բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման գործում։ Համալսարանի առավել աչքի ընկնող հայազգի գիտնական-դասախոսներից էին Ներսես Իոսիֆի Ներսիսյանը, նրա տղաները՝ միջազգայնագետ Ա. Ն. Ներսիսյանը, տնտեսագետ Մ. Ն. Ներսիսյանը, նրա աղջիկը՝ բժշկապետ Մ. Ն. Ներսիսյան-Հարությունյանը, ցիվիլիստ-սոցիոլոգ Յ. Ս. Գամբարովը, տնտեսագետներ Վ. Թ. Տոտոմ-

---

87 Նույն տեղում, էջ 395։

88 Նույնը՝ за 1913 год. М., 1914, с. 180, 239—240.

89 Նույն տեղում, էջ 180։

90 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1913 год. М., 1914, с. 183.

91 Նույնը՝ за 1912 год. М., 1913. с. 114—115.

92 Նույն տեղում։

93 Նույն տեղում։

94 Նույն տեղում։

95 Նույնը՝ за 1914 год. М., 1915, часть II, с. 13.

96 Նույն տեղում, էջ 20։

97 Նույն տեղում, էջ 23։

98 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1914 год. М., 1915, часть II, с. 27, 29.

99 Տե՛ս Отчет о состоянии и деятельности имп. Московского университета за 1914 год. М., 1915, часть II, с. 27, 29.

100 Նույնը՝ за 1904 год. М., 1905, с. 322.

101 Նույնը՝ за 1900 год. М., 1901, с. 285.

102 Նույնը՝ за 1915 год. М., 1916, часть I. с. 187.

103 Նույնը՝ за 1916 год. М., 1917, часть II, с. 97—98.

104 Նույն տեղում։

105 Նույնը՝ за 1916 год. М., 1917, часть II, с. 97—98.

106 Նույն տեղում։

յանը, Մ. Ա. Բունիաթյանը, իրավագեաներ Ս. Ա. Քեչեկյաներ, Մ. Ս. Աճեմյանը։ Հիշյալ ժամանակաշրջանում Մոսկվայի համալսարանում բժշկական գիտությունների դոկտորի աստիճանը ստացան շատ հայ բժիշկներ, անգամ մի քանի բժշկուհիներ։ Սակայն նրանց հիմնական մասը նախընտրում էր գործնական բժշկության ընդգավառը։ Համալսարանում դասախոսական աշխատանքի մեջ աչքի ընկան բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ Գ. Քյուլարյանը, մարդաբան Հարությունյանը, Գ. Գամբարովը, Քեփինյանը, նրա կինը՝ Լ. Քեփինյանը և հատկապես Գերասիմ Վլասյանը։ Համալսարանի խոստումնալից դասախոսներից էին ֆիզիկոս Ս. Բասամյանը, մաթեմատիկոս Ե. Կոզբելյանը, լեզվաբան Լ. Մսերյանը, հալկաբան Գ. Խալաթյանը և ուրիշները։

XIX դարի 60-ական թթ. մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը համալսարանում աշխատել են ավելի քան 25 հայազգի դոցենտներ և պրոֆեսորներ, գիտական աստիճան են ստացել հարյուրից ավելի հայեր, որոնք իրենց հասանելի լման են ներմուծել համալսարանում գիտության զարգացման, հայ ուսանողների ազգային ոգու բարձրացման, ինչպես և հայ մշակույթի պրոպագանդման գործում։ Նրանք ներքաշվա՝ էին Մոսկվայի հայկական դալթոշախի և հատկապես լազարյան ճեմարանի ազգանվեր գործունեության ոլորտը և տառապում էին բազմաչարչար հայ ժողովրդի՝ օրեցօր ծանրացող հոգսերով։

Դժվար է գերագնահատել Մոսկվայի համալսարանի դերը արևելահայ երիտասարդությանը բարձրագույն կրթություն տալու գործում։ Հանդիսանալով արևելահայ ուսանողության բուհական կրթության կենտրոնը, այն միայն XX դարի սկզբին տվեց ավելի քան 747 հայ շրջանավարտ։

Դարասկզբին դժվար թե գտնվեր հայ մշակութային կյանքի որևէ բնագավառ, ստավոր զարդացման որևէ ճյուղ, որին իր ակտիվ մասնակցությունը չցուցաբերեր ռուսական բուհական կրթությամբ, հատկապես Մոսկվայի համալսարանի բովով անցած հայ գործիչը։

АРМЯНСКОЕ СТУДЕНЧЕСТВО В МОСКОВСКОМ УНИВЕРСИТЕТЕ

(вторая половина XIX—начало XX в.)

Н. Г. САРКИСЯН

Резюме

Московский университет сыграл большую роль в развитии высшего образования, подготовки высококвалифицированных специалистов и научных работников, в частности для восточных армян. Деятельность университета была особенно значительной с 60—70-х гг. XIX в., когда под влиянием бурно развивающихся буржуазных отношений и порождаемого ими русского и армянского общественно-педагогического движения быстро росло число студентов-армян; в 1876—1916 гг. они составляли 1,7—5,2% всех студентов Московского университета. После буржуазно-демократической революции 1905 г. здесь ежегодно обучалось от 288 до 532 армян. За 46 лет (1870—1916) университет выпустил более чем 1246 специалистов с высшим образованием, подготовил более ста кандидатов, магистров и докторов наук, в их числе около 25 доцентов и профессоров, работавших в университете. Московский университет имеет заслуги не только в формировании восточноармянской интеллигенции и развитии арменоведения, но и в воспитании пламенных революционеров-армян.